ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183 yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 օգոստոսի 2026 թվականի N 504-Ա

ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԸ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 29-րդ և 50-րդ կետերը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող բնակավայրերի նշանակության 0.0024 հա մակերսով (կադաստրային ծածկագիր՝ 10-001-0169-000-ից) հասարակական կառուցապատման հողը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքին տրամադրել հետևյալ հասցեն՝ Եղեգնաձոր համայնք, ք. Եղեգնաձոր, Երևանյան խճուղի, 128 հողամաս:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 25
ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183 yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 օգոստոսի 2026 թվականի N 505-Ա

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի N 1066-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված կարգի 7-րդ կետի պահանջը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Եղեգնաձոր համայնքի Գետափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.07715 հա վարելահող հողատեսքը (կադաստրային ծածկագիր՝ 10-014-0129-0016) ցածրարժեքից փոխադրել բարձրարժեքի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողատեսքը փոխադրել որպես խաղողի այգի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 25
ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183 yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 օգոստոսի 2026 թվականի N 506-Ն

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Եղեգնաձոր համայնքի ավագանու 2026 թվականի հունվարի 7-ի՝ «Եղեգնաձոր համայնքի 2026 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 03-Ն որոշման 2-րդ կետը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Եղեգնաձոր համայնքի ավագանու 2026 թվականի հունվարի 7-ի թիվ 03-Ն որոշմամբ հաստատված բյուջեում կատարել հետևյալ վերաբաշխումը.

1) Պակասեցնել՝ գործառնական դասակարգման.

ա. 01.06.01 ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4239 (ընդհանուր բնույթի ծառայություններ) հոդվածից 320 000 (երեք հարյուր քսան հազար) ՀՀ դրամ,

բ. 04.05.01 ոլորտի տնտեսագիտական դասակարգման 5113 (շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) հոդվածից 16 040 000 (տասնվեց միլիոն քառասուն հազար) ՀՀ դրամ:

2) Ավելացնել՝

ա. 01.06.01 ոլորտի տնտեսագիտական դասակարգման՝ 5129 (այլ մեքենաներ և սարքավորումներ) հոդվածին 8 600 000 (ութ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ լուսացույցերի ձեռք բերման համար, 5113 (շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) հոդվածին 4 430 000 (չորս միլիոն չորս հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ Կամոյի 2Ա բազմաբնակարան բնակելի շենքի տանիքի հիմնանորոգման աշխատանքների ֆինանսավորման համար և 4269 (հատուկ նպատակային նյութեր)

հոդվածին 320 000 (երեք հարյուր քսան հազար) ՀՀ դրամ արհեստական անհարթությունների ձեռքբերման համար,

բ. 06.04.01 ոլորտի տնտեսագիտական դասակարգման 5112 (շենքերի և շինությունների կառուցում) հոդվածին 700 000 (յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ Եղեգնաձոր համայնքի Կամոյի, Չալաբյան, Մշեցու, Թամանցիներ և Չարենց փողոցների լուսավորության ցանցի վերջին կատարողականի վճարման համար,

գ. 06.03.01 ոլորտի տնտեսագիտական դասակարգման 5112 (շենքերի և շինությունների կառուցում) հոդվածին 2 310 000 (երկու միլիոն երեք հարյուր տասներեք հազար) ՀՀ դրամ,

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 25
ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183
yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 օգոստոսի 2026 թվականի N 507-Ա

ԱՃՈՒՐԴՈՒՄ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉՎԱԾԻ ՀԵՏ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 70-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Եղեգնաձոր համայնքի ավագանու 2026 թվականի հունիսի 17-ի N 81-Ա որոշումը և 2026 թվականի օգոստոսի 18-ից 21-ը էլեկտրոնային համակարգի միջոցով կայացած աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը (լոտի համարը՝ 1631269).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր քաղաքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նշանակության 1.21241 հա վարելահողի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ 03062026-10-0030, կադաստրային ծածկագիր՝ 10-001-0360-0108) աճուրդում հաղթող ճանաչված Վարդանուշ Հայրիկի Հովակիմյանի (ծնված՝ 10.06.1960թ.) հետ կնքել առուվաճառքի պայմանագիր:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի վաճառքի գին ընդունել աճուրդում առաջարկված առավելագույն գինը՝ 3 620 000 (երեք միլիոն վեց հարյուր քսան հազար) ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 25
ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183
yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 օգոստոսի 2026 թվականի N 508-Ա

ԱՃՈՒՐԴՈՒՄ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉՎԱԾԻ ՀԵՏ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 70-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Եղեգնաձոր համայնքի ավագանու 2026 թվականի հունիսի 17-ի N 81-Ա որոշումը և 2026 թվականի օգոստոսի 18-ից 21-ը էլեկտրոնային համակարգի միջոցով կայացած աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը (լոտի համարը՝ 4840648).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր քաղաքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նշանակության 0.609 հա վարելահողի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ 13052026-10-0011, կադաստրային ծածկագիր՝ 10-001-0360-0109) աճուրդում հաղթող ճանաչված Վարդանուշ Հայրիկի Հովակիմյանի (ծնված՝ 10.06.1960թ.) հետ կնքել առուվաճառքի պայմանագիր:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի վաճառքի գին ընդունել աճուրդում առաջարկված առավելագույն գինը՝ 2 490 000 (երկու միլիոն չորս հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 25
ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183
yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 օգոստոսի 2026 թվականի N 509-Ա

ԱՃՈՒՐԴՈՒՄ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉՎԱԾԻ ՀԵՏ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 70-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Եղեգնաձոր համայնքի ավագանու 2026 թվականի հունիսի 17-ի N 81-Ա որոշումը և 2026 թվականի օգոստոսի 18-ից 21-ը էլեկտրոնային համակարգի միջոցով կայացած աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը (լոտի համարը՝ 9976443).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր քաղաքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նշանակության 6.94099 հա վարելահողի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ 02062026-10-0022, կադաստրային ծածկագիր՝ 10-001-0360-0110) աճուրդում հաղթող ճանաչված Վարդանուշ Հայրիկի Հովակիմյանի (ծնված՝ 10.06.1960թ.) հետ կնքել առուվաճառքի պայմանագիր:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի վաճառքի գին ընդունել աճուրդում առաջարկված առավելագույն գինը՝ 17 620 000 (տասնյոթ միլիոն վեց հարյուր քսան հազար) ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 25
ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183 yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 օգոստոսի 2026 թվականի N 510-Ա

ԱՃՈՒՐԴՈՒՄ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉՎԱԾԻ ՀԵՏ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 70-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Եղեգնաձոր համայնքի ավագանու 2026 թվականի հունիսի 17-ի N 81-Ա որոշումը և 2026 թվականի օգոստոսի 18-ից 21-ը էլեկտրոնային համակարգի միջոցով կայացած աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը (լոտի համարը՝ 8174781).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր քաղաքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նշանակության 0.23064 հա վարելահողի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ 11052026-10-0006, կադաստրային ծածկագիր՝ 10-001-0360-0103),. 0.24301 հա վարելահողի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական 11052026-10-0012, կադաստրային ծածկագիր 10-001-0360-0073) և 0.25152 հա վարելահողի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական 11052026-10-0028, կադաստրային ծածկագիր 10-001-0360-0015) աճուրդում հաղթող ճանաչված Վարդանուշ Հայրիկի Հովակիմյանի (ծնված՝ 10.06.1960թ.) հետ կնքել առուվաճառքի պայմանագիր:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասերի վաճառքի գին ընդունել աճուրդում առաջարկած առավելագույն գները՝ 0.23064 հա վարելահողի համար 1 020 000 (մեկ միլիոն քսան հազար) ՀՀ դրամ, 0.24301 հա վարելահողի համար 1 070 000 (մեկ միլիոն յոթանասուն հազար) ՀՀ դրամ և 0.25152 հա վարելահողի համար 1 110 000 (մեկ միլիոն մեկ հարյուր տաս հազար) ՀՀ դրամ, վաճառքի ընդհանուր գինը՝ 3 200 000 (երեք միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 25
ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183
yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 օգոստոսի 2026 թվականի N 511-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 102-րդ հոդվածի 4-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 697-րդ հոդվածի և հիմք ընդունելով «Ուլար» համայնքային բնապահպանական հիմնադրամի տնօրենի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Դադարեցնել 2017 թվականի նոյեմբերի 10-ին Գետափ համայնքի ղեկավարի և «Ուլար» համայնքային բնապահպանական հիմնադրամի միջև կնքված անշարժ գույքի (կադաստրային ծածկագիր՝ 10-014-0166-0078, 480 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք) անհատույց օգտագործման պայմանագիրը:

2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե՝ պետական գրանցման փոփոխությունն իրականացնելու նպատակով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 25
ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183
yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 օգոստոսի 2026 թվականի N 512-Ա

ՈԳԵԼԻՑ, ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Եղեգնաձոր համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 155-Ն որոշման 1-ին հավելվածի 10-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի «գ» պարբերությունները և ԱՁ Վարդան Հովհաննիսյանի հայտը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի Միկոյան փողոց 1/01 հասցեում գտնվող առևտրի սրահում՝ ոգելից, ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք իրականացնելու նպատակով ԱՁ Վարդան Հովհաննիսյանին տալ թույլտվություն՝ 2026 թվականի 3-րդ եռամսյակի համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2026 թ. օգոստոսի 27
ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ N ՈՒԽԾ - 28

ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԿԱՄ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ

Տրված՝ 27 օգոստոս 2026թ.

Վաճառքի կամ իրացման թույլատրված ապրանքի անվանումը՝
Ոգելից, ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք

Հայտատու իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպաիրավական ձևը և գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և գտնվելու վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը՝
«ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵՐԵՄԻ» ԱՁ, Եղեգնաձոր համայնք, գյուղ Գեղափ, Եղեգնաձորի խճղ. 3 փկղ., ՀՎՀՀ՝ 76860877

Գործունեության տեսակի իրականացման վայրը՝
ք. Եղեգնաձոր, Միկոյան փողոց 1/01

Շինության տեսակը՝
Հիմնական շինություն

Թույլտվության գործողության ժամկետը՝
01 հուլիս 2026-ից մինչև ***30 սեպտեմբեր 2026***-ը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183 yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 օգոստոսի 2026 թվականի N 513-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 18-րդ հոդվածի 1-ին և 2.1 մասերով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով և հիմք ընդունելով տեղական ինքնակառավարման մարմինների 2026 թվականի հոկտեմբերի 25-ին կայանալիք համամասնական ընտրակարգով անցկացվող ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցի 11-րդ կետի պահանջը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի ավագանու 2026 թվականի հոկտեմբերի 25-ին կայանալիք հերթական ընտրությունների անցկացման համար Եղեգնաձոր համայնքում սահմանել տեղամասային կենտրոններ՝ համաձայն հավելվածի:

2.Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝

1) մինչև 2026 թվականի սեպտեմբերի 12-ը սույն որոշման մասին տեղեկացնել լիազոր մարմին և տեղամասային կենտրոնների տարածքները տիրապետողներին,

2) մինչև 2026 թվականի սեպտեմբերի 12-ը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի հաստատմանը ներկայացնել տեղամասային կենտրոնների ցանկը՝ նշելով տեղամասային կենտրոնների գտնվելու վայրը, ինչպես նաև տեղամասային կենտրոնների և քվեարկության սենյակների բնութագրերը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 27
ք. Եղեգնաձոր

Հավելված

ՀՀ Վայոց ձորի մարզի
Եղեգնաձոր համայնքի ղեկավարի
2026 թվականի օգոստոսի 27-ի N 513-Ա որոշման

ՑԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ

Մարզ	Համայնք	Բնակավայր	Հասցե
Վայոց ձոր	Եղեգնաձոր	Եղեգնաձոր քաղաք	Մշակույթի տուն, ք.Եղեգնաձոր, Մոմիկի փ., շ. 1
Վայոց ձոր	Եղեգնաձոր	Եղեգնաձոր քաղաք	Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն, ք.Եղեգնաձոր, Շահումյան փ., շ.14
Վայոց ձոր	Եղեգնաձոր	Եղեգնաձոր քաղաք	Թիվ 1 հիմնական դպրոց, ք. Եղեգնաձոր, Վ. Գևորգյան փ., շ.4
Վայոց ձոր	Եղեգնաձոր	Եղեգնաձոր քաղաք	Ռելեի գործարանի հասարակական տարածք, ք. Եղեգնաձոր, Շահումյան փողոց, 20 շենք
Վայոց ձոր	Եղեգնաձոր	Գետափ գյուղ	Մշակույթի տուն, գ. Գետափ, փ. 19, շ. 1ա
Վայոց ձոր	Եղեգնաձոր	Գլաձոր գյուղ	Գլաձորի մշակույթի տուն, գ. Գլաձոր, 11-րդ փողոց, շ. 9
Վայոց ձոր	Եղեգնաձոր	Մալիշկա գյուղ	Թիվ 1 միջնակարգ դպրոց, գ.Մալիշկա, փ. 8., շ. 76
Վայոց ձոր	Եղեգնաձոր	Մալիշկա գյուղ	Մալիշկայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան միջնակարգ դպրոց, գ. Մալիշկա, փ. 37, շ. 19
Վայոց ձոր	Եղեգնաձոր	Վերնաշեն գյուղ	Մշակույթի տուն, գ.Վերնաշեն, Թանահատի փ., շ. 56

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183
yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 օգոստոսի 2026 թվականի N 514-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով քաղաքացի Օնիկ Արմենակի Սարգսյանի կողմից ներկայացված դիմումը (մուտքի թիվ՝ 2266), Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 13-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ և 62-րդ կետերի, Եղեգնաձոր համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 155-Ն որոշման 2-րդ հավելվածի 19-րդ կետի պահանջները, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Եղեգնաձոր համայնքի, Եղեգնաձոր քաղաքի Ա. Միկոյան փողոց, 22/17 հասցեում կառուցված ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում կյանքին և առողջությանը, ինչպես նաև՝ ինքնակամ կառույցը կառուցված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում և քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չի հակասում սահմանված կարգով հաստատված գլխավոր հատակագծերի, քաղաքաշինական գոտիավորման նախագծերի, հողերի օգտագործման սխեմաների և քաղաքաշինական ծրագրերի պահանջներին.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի Ա. Միկոյան փողոց 22/17 հասցեում գտնվող, քաղաքացի Օնիկ Արմենակի Սարգսյանին սեփականության

իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 2197410) հողատարածքում ինքնակամ կառուցված՝ 16.66 քմ ներքին մակերեսով և 18.0 քմ արտաքին մակերեսով շինությունը (ավտոտնակ) համարել օրինական (որակավորում ունեցող անձի կողմից չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2026VMVJSL):

2. Առաջարկել կառույցն իրականացրած Օնիկ Արմենակի Սարգսյանին (ծնված՝ 08.12.1948թ.), 1 քմ շինության օրինականացման համար Եղեգնաձորի համայնքապետարանի 900355101099 հաշվեհամարին վճարել՝ 1969 (մեկ հազար ինը հարյուր վաթսունինը) ՀՀ դրամ ընդամենը 35 450 (երեսունհինգ հազար չորս հարյուր հիսուն) ՀՀ դրամ՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 6-ի N 1023-Ն որոշմամբ հաստատված գործակիցները:

3 . Կառույցը համապատասխանում է համայնքային նշանակության քաղաքաշինության համալիր ծրագրով նախատեսված գոտիներում գտնվող կառույցների ծրագրերի պայմաններին:

4. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60 օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Օնիկ Արմենակի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող Եղեգնաձոր համայնք, Եղեգնաձոր բնակավայր Ա. Միկոյան փողոց 2 հասցում գրանցված անշարժ գույքը վերահասցեավորել և տրամադրել հետևյալ հասցեն՝ Եղեգնաձոր համայնք, Եղեգնաձոր բնակավայր, Ա.Միկոյան փողոց, 22/17 ավտոտնակ:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման մասին անձին տեղեկացնելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 28
ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183
yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 օգոստոսի 2026 թվականի N 515-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով քաղաքացի Վարդիթեր Գուրգենի Ավագյանի կողմից ներկայացված դիմումը (մուտքի թիվ՝ 1656), Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 13-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 50-րդ կետերի պահանջները, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Եղեգնաձոր համայնքի, Եղեգնաձոր քաղաքի Ա. Միկոյան փողոց, 14/9 հասցեում կառուցված ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում կյանքին և առողջությանը, ինչպես նաև՝ ինքնակամ կառույցը կառուցված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում և քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չի հակասում սահմանված կարգով հաստատված գլխավոր հատակագծերի, քաղաքաշինական գոտիավորման նախագծերի, հողերի օգտագործման սխեմաների և քաղաքաշինական ծրագրերի պահանջներին.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի Ա. Միկոյան փողոց 16/6 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող (կադաստրային

ծածկագիր՝ 10-001-0051-0001-ից) հողատարածքում ինքնակամ կառուցված՝ 63.2 քմ ներքին մակերեսով և 72.9 քմ արտաքին մակերեսով շինությունը (ավտոտնակ) և 0.00364 հա զբաղեցված հողատարածքը համարել օրինական (որակավորում ունեցող անձի կողմից չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2026MAGTMZ):

2. Առաջարկել կառույցն իրականացրած Վարդիթեր Գուրգենի Ավագյանին (ծնված՝ 22.09.1949թ.), 1քմ շինության օրինականացման համար Եղեգնաձորի համայնքապետարանի 900355101099 հաշվեհամարին վճարել՝ 1969 (մեկ հազար ինը հարյուր վաթսունինը) ՀՀ դրամ և 900355101180 հաշվեհամարին՝ հողի 1քմ-ի համար 4441.8 (չորս հազար չորս հարյուր քառասունմեկ դրամ ութ լումա) ՀՀ դրամ, ընդամենը 305 240 (երեք հարյուր հինգ հազար երկու հարյուր քառասուն) ՀՀ դրամ՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 6-ի N 1023-Ն որոշմամբ հաստատված գործակիցները:

3. Կառույցը համապատասխանում է համայնքային նշանակության քաղաքաշինության համալիր ծրագրով նախատեսված գոտիներում գտնվող կառույցների ծրագրերի պայմաններին:

4. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման համար պահանջվող վճարները թողնել քաղաքացի Վարդիթեր Գուրգենի Ավագյանի վրա:

5. Եղեգնաձոր համայնքին սեփականության իրավունքով պատկանող (10-014-0051-0001-ից կադաստրային ծածկագրով) անշարժ գույքին տրամադրել հետևյալ հասցեն՝ Եղեգնաձոր համայնք, Եղեգնաձոր բնակավայր, Ա. Միկոյան փողոց, 16/6 ավտոտնակ:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման մասին անձին տեղեկացնելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 28
ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183
yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 օգոստոսի 2026 թվականի N 516_ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով քաղաքացի Արա Ռաֆիկի Ալեքսանյանի կողմից ներկայացված դիմումը (մուտքի թիվ՝ 2036), Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 13-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 50-րդ կետերի պահանջները, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Եղեգնաձոր համայնքի, Եղեգնաձոր քաղաքի Ա. Միկոյան փողոց, 11/8 հասցեում կառուցված ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում կյանքին և առողջությանը, ինչպես նաև՝ ինքնակամ կառույցը կառուցված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում և քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չի հակասում սահմանված կարգով հաստատված գլխավոր հատակագծերի, քաղաքաշինական գոտիավորման նախագծերի, հողերի օգտագործման սխեմաների և քաղաքաշինական ծրագրերի պահանջներին.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի Ա. Միկոյան փողոց 11/8 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող (կադաստրային

ծածկագիր՝ 10-001-0050-0000-ից) հողատարածքում ինքնակամ կառուցված՝ 19.21 քմ ներքին մակերեսով և 19.9 քմ արտաքին մակերեսով շինությունը (ավտոտնակ) և 0.00199 հա զբաղեցված հողատարածքը համարել օրինական (որակավորում ունեցող անձի կողմից չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 20263KQQ64):

2. Առաջարկել կառույցն իրականացրած Արա Ռաֆիկի Ալեքսանյանին (ծնված՝ 06.03.1964թ.), 1քմ շինության օրինականացման համար Եղեգնաձորի համայնքապետարանի 900355101099 հաշվեհամարին վճարել՝ 1969 (մեկ հազար ինը հարյուր վաթսունինը) ՀՀ դրամ և 900355101180 հաշվեհամարին՝ հողի 1քմ-ի համար 4441.8 (չորս հազար չորս հարյուր քառասունմեկ դրամ ութ լումա) ՀՀ դրամ, ընդամենը 127 590 (մեկ հարյուր քսանյոթ հազար հինգ հարյուր իննսուն) ՀՀ դրամ՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 6-ի N 1023-Ն որոշմամբ հաստատված գործակիցները:

3 . Կառույցը համապատասխանում է համայնքային նշանակության քաղաքաշինության համալիր ծրագրով նախատեսված գոտիներում գտնվող կառույցների ծրագրերի պայմաններին:

4 . Անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման համար պահանջվող վճարները թողնել քաղաքացի Արա Ռաֆիկի Ալեքսանյանի վրա:

5. Եղեգնաձոր համայնքին սեփականության իրավունքով պատկանող (10-014-0050-0000-ից կադաստրային ծածկագրով) անշարժ գույքին տրամադրել հետևյալ հասցեն՝ Եղեգնաձոր համայնք, Եղեգնաձոր բնակավայր, Ա. Միկոյան փողոց, 11/8 ավտոտնակ:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման մասին անձին տեղեկացնելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 28
ք. Եղեգնաձոր